

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Երևադեմ, 31 Դեկտեմբեր 1954

Նորին Գերաւորհուրին

Վահան Արեւադ. Կոստանեան

Էջմիածին

Ձերդ Գերաւորհուրեան եւ Գերազոյն
Հոգեւոր Խորհուրդի անդամներուն կը ներ-
կայացնենք մեր շնորհաւորութիւնները Նոր
Տարւոյ եւ Ս. Ծննդեան առթիւ եւ կ'աղո-
րենք մեր եկեղեցւոյ պայծառութեան:

ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊՍ. ՏԷՐՏԷՐԵԱՆ
Պատր. Տեղապան Ս. Երևադեմի

Երևան, 5 Յունուար 1955

Նորին Ամենապատուութիւն

Եղիշե Արեւադ. Տէրտեան

Երևադեմ

Կը մաղթենք Ձերդ Ամենապատուութեան,
Միաբանութեան եւ հաւատացեալներուն եւ-
ջանիկ Նոր Տարի եւ Ս. Ծնունդ: Գերազոյն
Հոգեւոր Խորհուրդը կ'աղօրէ Միաձայնեջ
Մայր Տանարին մէջ աշխարհի խաղաղու-
թեան համար, նաեւ համայն մարդկութեան
բարօրութեան եւ երջանկութեան: Թող Բեր-
դենեմի աստղը առաջնորդէ բոլորին դեպի
փափաքուած խաղաղութիւնը: Կ'աղօրենք Ս.
Էջմիածնայ Մայր Աթոռոյ յարատեւութեան
եւ կայունութեան համար:

ԴԵՐԱԳՈՅՆ ՀՈԳԵԻՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ

Երևադեմ, 31 Դեկտեմբեր 1954

Նորին Վսեմութիւն

Դաւուս Կիւլպենկեան

Լիպզոն

Ձերդ Վսեմութեան կը ներկայացնենք
մեր արտաբերական մաղթանքները Նոր Տարւոյ
եւ Ս. Ծննդեան առթիւ: Կ'աղօրենք որ Տէր
պարգեւէ Ձեզ եւ Ձեր բնականաց երկար եւ
երջանիկ տարիներ:

ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊՍ. ՏԷՐՏԷՐԵԱՆ
Պատր. Տեղապան Ս. Երևադեմի

Նորին Ամենապատուութիւն

Եղիշե Արեւադ. Տէրտեան

Երևադեմ

Տիար Դաւուս Կիւլպենկեան իր ջերմ
շնորհակալութիւնները կը յայտնէ Ձեր ազնիւ
մաղթանքներուն եւ աղօրքներուն համար եւ
կը փոխադարձէ զանոնք:

ՅԱԿՈԲԵԱՆ

Ե Կ Ե Ղ Ե Յ Ա Կ Ա Ն Ք - Բ Ե Մ Ա Կ Ա Ն Ք

● Կիր. 2 Յուն. — Ս. Պատարագը մատու-
ցուեցաւ ի Ս. Հրեշտակապետ. Պատարագեց Հոգ.
Տ. Ջաւէն Վրդ. Զինչինեան եւ քարոզեց, բնա-
րան ունենալով «Յաշխարհի աստ Նեղութիւն ու-
նիցիք, այլ քաջալիքեցարժէք՝ դի ես յաղթեցի
աշխարհի» (Յովն. ԺԶ. 33):

● Դշ. 5 Յուն. — Ս. Ծննդեան տօնը կանխող
Աւագ Տօներու առաջինին — Ս. Դաւթի մարգա-
րէին եւ Յակոբայ Տեառնեղբոր — Նախատեսակը
պաշտուեցաւ Ս. Յակոբեանց Տանարին մէջ մեծ
շուքով: Հանդիսապետն էր Ամեն. Տեղապան Ս.
Հայրը: Նախատեսակէն ետք, Միաբանութիւնը
«Օրհնեցէք զՏէր» Ս. Աթոռոյ շարականի երգեցու-
ղութեամբ բարձրացաւ Պատրիարքարան:

● Եշ. 6 Յուն. — Տօն Ս. Դաւթի մարգարէին եւ
Յակոբայ Տեառնեղբոր (Տօն Առաք. Ս. Աթոռոյն Երու-
սաղեմի): Առաւտեան ժամերգութենէն ետք,
օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատուցուե-
ցաւ Մայր Տանարի Աւագ Սեղանին — Տեառնեղ-
բոր զերեզմանին — վրայ: Պատարագեց եւ քա-
րոզեց Դեր. Տ. Նորայր Եպս. Պողարեան, բնա-
րան ունենալով Հին Կտակարանէն Դաւթի մար-
գարէի մէկ խօսքը «Փոքր էի ես յեղբարց իմոց
եւ արած էի զխաշինա հօր իմոյ»: Դաւթի թէն
ամենափոքրն էր իր եղբայրներուն մէջ եւ հօ-
վիւ էր ոչխարներու, սակայն Տէրը իր բնութեալ
ժողովուրդին հովիւ կարգեց զայն: Մենք ես
փոքրաթիւ ժողովուրդ մըն ենք, սակայն այդ չի
նշանակէր թէ անտեսուած ենք Տիրոջմէ եւ կամ
անարժէք: Ապա, օրուան տօնին առթիւ բարե-
մաղթութիւններ քրաւ Ս. Աթոռոյ պայծառու-
թեան եւ Ն. Ամեն. Տեղապան Ս. Հօր արեւշատու-
թեան համար: Քարոզէն ետք, Ամեն. Տեղապան
Ս. Հօր Նախագահութեամբ, կատարուեցաւ տարե-
կան հանդիսաւոր հոգեհանգստեան կարգը, Ս. Ա-
թոռոյ հանգուցեալ Պատրիարքներու հոգիներուն
ի հանդիսով:

● Ուր. 7 Յուն. — Ս. Առեփանոսի Նախա-
տեսակը մեծ հանդիսաւորութեամբ պաշտուեցաւ
Մայր Տանարին մէջ, Հանդիսապետն էր Ամեն.
Տեղապան Ս. Հայրը:

● Եր. 8 Յուն. — Տօն Ս. Ասեմյանցի նախա-
վելային: Ըստ սովորույթի, առաւօտեան ժամեր.
գութեան ընթացքին տեղի ունեցան Սարկաւա-
զաց և Ուրարայրաց մասնաւոր հանդիսութիւնը:
Ամենք՝ թիւով 8՝ առաջնորդութեամբ Լոգ. Տ. Տ.
Զաւէն և Վարուսան Վարդապետներու, մարգար-
տազարդ թագերով և արծաթագամ շապիկներով
զգեստաւորուած կատարեցին Փառք Ի բար.
ձունաէն մինչև առաւօտեան ժամերգութեան
աւարտը կատարուող արարողութիւնները: Հան-
դիսութեան նախագահեց Ամեն. Տեղապահ Սրբա-
ղանը: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տա-
նարի աւանդատուն — Ս. Ստեփանոս մատրան
Աւագ Սեղանին վրայ: Ժամարարն էր Լոգ. Տ.
Հայկազուն Վրդ. Արքահաման:

● Կիր. 9 Յուն. — Ս. Պատարագը մատու-
ցուեցաւ Ի Ս. Բարու թիւն, Բ. Գողգոթայի վեր-
նաժամարան մէջ: Ժամարարն էր Լոգ. Տ. Գարգե
Վրդ. Վրթանէսեան: Ս. Թ. Վարժարանի նախա-
կրթարանի և երկրորդական բաժնի ուսանողու-
թիւնը ստացաւ Ս. Հաղորդութիւն:

— Դիւանար առաքելոց՝ Պետրոսի և Պողոսի
նախատեսակը պաշտուեցաւ Մայր Տաճարին մէջ
մեծ հանդիսաւորութեամբ: Հանդիսաւորութեան էր
Գեր. Տ. Սուրէն Եղտ. Քէմանեան:

● Բշ. 10 Յուն. — Տօն Ս. Աւամեղացի Պետրոսի
և Պողոսի: Առաւօտեան ժամերգութեանը ետք,
Ս. Բակորեանց Մայր Տաճարի Ս. Պետրոսի վեր-
նաժամարան մէջ մատուցուեցաւ Ս. Պատարագ,
Ժամարարն էր Լոգ. Տ. Վաղգէ Արդ. Գպրեղեան:
Ս. Թ. Մանկապարտէզի երկսեռ աշակերտութիւնն
ու ուսուցչական կազմը ստացան Ս. Հաղորդու-
թիւն:

— Որդւոց Որոտման, Բակորայ և Յովհաննոս
նախատեսակը պաշտուեցաւ Մայր Տաճարին մէջ
մեծ մայելուչ հանդիսաւորութեամբ: Նախագա-
հութեամբ Ամեն. Տեղապահ Ս. Լօր: Նախատես-
կէն ետք, Միաբանութիւնը ընդ էն յէութեան
շարականի երկեցողութեամբ բարձրացաւ Պատ-
րիարարան:

● Դշ. 11 Յուն. — Տօն Ս. Որդւոց Որոտման,
Բակորայ Դիւանդի աւամեղացի և Յովհաննոս
նախատեսակը պաշտուեցաւ Մայր Տաճարին մէջ
մեծ մայելուչ հանդիսաւորութեամբ: Առաւօտեան
ժամերգութեանը ետք, Ամեն. Տե-
ղապահ Ս. Լայրը մատուց օրուան հանդիսաւոր
Ս. Պատարագը Ս. Դիւանդի մատրան մէջ և ապա
նախագահեց երրորդութեան մեծահանգէս թափօրին
Մայր Տաճարին մէջ, յորմենեակ Միաբանութիւնը
ընդ էն յէութեան՝ շարականի երկեցողութեամբ
բարձրացաւ Պատրիարարան, ուր Տեղապահ Ս.
Լայրը օրհնուած նշխարներ բաշխեց բոլորին,
փակելով Աւագ Տօներու շարքը:

● Ուր. 14 Յուն. — Ամանորի առթիւ, Մայր
Տաճարին մէջ պատարագեց, ըստ սովորութեան,
Ժամօրհնող Լոգ. Տ. Գարգե Վրդ. Վրթանէսեան,
Բարողեց Լոգ. Տ. Հայկազուն Վրդ. Արքահաման,
ընարան ունենալով Միկտութեան Մաշտոցէն
«Նոր Իսրայէլ կոչեցար...», շնչտելով Ամանորին
առաւելապէս հաշուեյարգարի օր մը ըլլալու
հանգամանքը: Ս. Պատարագէն ետք, Միաբանու-

թիւնը «Օրհնեցէք զՏէր» շարականի երկեցողու-
թեամբ բարձրացաւ Պատրիարարան: Ուր Լոգ.
Տ. Հայկազուն Վրդ. Ի զիմաց Միաբանութեան,
աւուր պատշաճի խօսքեր ուղղեց Ամեն. Տեղա-
պահ Սրբապետին: Նոյն սիրայիկ զգացմամբ ու-
ղերձ մը կարգաց Բար. Տիր. Գրիգոր Սրկ. Սահակ-
եան Ի զիմաց Ժառ. Վարժ. և Ընծայարանի ու-
սանողութեան, իսկ Սրբոց Թարգմանչաց Ման-
կապարտէղէն փոքրիկ մը Ի զիմաց Ս. Թարգման-
չաց Վարժարանի ուսանողութեան: Հուսկ ապա
խօսք առաւ Տեղապահ Ս. Լայրը, որ փոխադարձ
շնորհաւորական խօսքերէ ետք ըսաւ թէ անցնող
տարին թէև չիբրկանացուց մեր իր վրայ դրած
յոյսերը, սակայն պէտք է զաղքիլ յուսուիլ բա-
րին գալիք բոլոր տարիներէն: Մեր յուսիսը բո-
լոր պէտք է մէջ գնող յաւանքաւորեան: Ապա
ներկաները մատուցան Տեղապահ Ս. Լօր աջնամ-
բոյրի և ստացան մէկական նարինջ:

● Կիր. 16 Յուն. — Ս. Պատարագը մատու-
ցուեցաւ Ի Ս. Հրեշտակապետ: Պատարագեց և
բարողեց Լոգ. Տ. Զաւէն Վրդ. Զինչինեան, կոչ
ուղղելով ներկաներուն հոգեպէս պատրաստուիլ
տօնելու համար մեր Փրկչին հրաշափառ մնունքը:

● Դշ. 18 Յուն. — Ծնողայոց Ս. Ծննդեան:
Առաւօտեան ժամը 11ին, Ամեն. Տեղապահ Ս. Լօր
զիւսաւորութեամբ, Միաբանութիւնը մայրա-
վանքի դռնէն ինքնաշարժերու մէջ տեղաւոր-
ուած մեկնեցաւ զէպի Քիթլեմէմ, ուր հասաւ
կէսօրուան մօտ ու Ս. Ծննդեան վանքի հանդի-
պակաց հրապարակին մէջ զիմաստուեցաւ տեղ-
ւոյն կառավարական կազմէն: Զանգերու զօղան-
ջին ու ժողովուրդի բազմութեան ընդմէջէն թա-
փօրը յառաջացաւ զէպի տաճարի գալիքը: Դպրե-
ները խորհուրդ մեծ շարականը կարգաւորով ա-
ռաջնորդեցին Միաբանութիւնը զէպի վանք, ուր
զիմաստուեցան եկողներ հիւրասիրուեցան:

— Ժամը 2.30ին, Տեղապահ Ս. Լօր զիւսա-
ւորութեամբ Միաբանութիւնը «Զրաշափառ» ի կար-
գով մուտք գործեց Ս. Ծննդեան տաճար և ուղ-
ղուեցաւ զէպի Ս. Այրը, որուն ուխտէն ետք,
տաճարի մեր բաժնին մէջ կատարուեցաւ ճրա-
դալոյցի արարողութիւն ու մատուցուեցաւ Ս.
Պատարագ: Ժամարարն էր Անթիմիա Միաբան-
ներէն Լոգ. Տ. Զաւէն Արդ. Արզումանեան: Ապա
Տեղապահ Սրբապետը նախագահեց Ս. Ծննդեան
նախատեսակին, որմէ ետք խորհուրդ մեծ ի եր-
կեցողութեամբ թափօրը բարձրացաւ մեր վանքը
և Աւետարանի ընթերցումէն և «Փառք Ի բար-
ձունքի երկեցողութեանը ետք ամէնքը նստան
Ս. Ծննդեան աւանդական հաշուեյարգին:

— Գիշերուան ժամը 10ին, խորհրդաւոր ու-
ղուարթագին հնչել կը սկսին տաճարին հայկա-
կան դանգերը ու շատ շնչեղ, Գեր. Տ. Զարեհ
Սրբապետի զիւսաւորութեամբ կը սկսի զիւրաշին
ժամերգութիւնը մեղապատկան բաժնին մէջ:

● Դշ. 19 Յուն. — ԾՆՆՈՒՄԻ ԵՒ ԱՍՏՈՒԱՅՈՒ-
ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ: Կէս գիշերին, Միաբանութիւնն ու
ներկայ հաւատացեալներ իջան Սուրբ Ծննդեան
Այրը, ուր կատարուած արարողութիւններէն
մաս մը ձայնափառուեցաւ Բորդանանի Ռատիօ

կայանէն ի Կիւսուս աշխարհի: Կարգացուեցաւ Ս. Ծննդեան Աւետարանը, երգուեցաւ Փառք ի բարձունսդ: Գեր. Տ. Զարեհ Եպս., ի դիմաց Տեղապահ Սրբազանին, տուաւ հանուար հայտնութեան ուղղութեամբ Ս. Ծննդեան պատգամը: Ասկէ անդին մատուցուեցան զոյգ Ս. Պատարագներ: Առաջինը մատուցեց Զոգ. Տ. Պարգե Կրդ. Վրթանէսեան, իսկ երկրորդը Գեր. Տ. Զարեհ Ս. Եպս. Փայասիան: Կատարուեցաւ նաեւ «Ջորճնէք», որու ընթացքին քարոզեց ճանդի-ապետ Գեր. Տ. Զարեհ Սրբազան: Երեկաներէն շատեր Ս. Պատարագի ընթացքին Հաղորդուեցան: Արարողութիւնները աւարտեցան արեւածագին Ս. Ծննդեան հայաւիանքին մէջ կատարուած աւետարանի ընթերցումով:

— Աւանդական նախաճաշէն ետք, Գեր. Տ. Զարեհ Սրբազանի գլխաւորութեամբ, Միաբանութիւնը ինքնաշարժեբով ճամբայ ելաւ դէպի Երուսաղէմ, հասաւ ժամը 9ին ու բարձրացաւ Պատրիարքարանի լուսադարձած դահլիճը ուր Գեր. Տ. Զարեհ Եպս. Տեղապահ Սրբազանին ուղղութեամբ շնորհաւորական խօսքերէն ետք մագիթեց որ Մարգարեալ Տէրը խաղաղութիւն պարգեւէ Սուրբ Երկրին:

— Կէսօրէ ետք Մայր Տաճարին մէջ պաշտուեցաւ Ս. Ծննդեան տօնին յաջորդող Տօրերուն յատուկ նախատօնակի առաջին հանդիսութիւնը՝ որուն կը նախագահէր Գեր. Տ. Զարեհ Սրբազան:

● Եւ. 20 Յուն. — Յիւսուսի մեղեղաց: Ս. Պատարագը Մայր Տաճարին մէջ մատուցեց ըստ սովորութեան Աւագ Թարգման Զոգ. Տ. Հայրիկ Կրդ. Ասլանեան:

● Կիր. 23 Յուն. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Եփեսոսի, Բ. Գողգոթայի վերնամատրան մէջ: Ժամարարն էր Զոգ. Տ. Զաւեն Կրդ. Զինչիւնեան:

● Դշ. 25 Յուն. — Մայր Տաճարին մէջ պաշտուած Անուանակոչութեան նախատօնակին՝ նախագահեց Գեր. Տ. Զարեհ Եպս. Փայասիան:

● Դշ. 26 Յուն. — Անուանակոչութիւն: Առաւօտեան ժամերգութենէն ետք, Գեր. Տ. Զարեհ Սրբազանի գլխաւորութեամբ, Միաբանութիւնը «Հրաշափառ»-ով մուտք գործեց Ս. Եփեսոսի Տաճար, ուր Քրիստոսի Սուրբ Գերեզմանին վրայ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատուցեց և քարոզեց Գեր. Հանդիսապետ Սրբազանը, ծանրանալով ամուլ բառին վրայ: Մեր անհատական անուններէն անկախ և բարձր ունինք Քրիստոնէայ և Հայ հաւաքական անունները, որոնց հաւատարմութիւնը պարտինք մեզ ի դին ամէն զօնողութեան: Ս. Պատարագի երգեցողութիւնները կատարուեցան բազմաձայն, զեկաւարտութեամբ Ս. Աթոռոյս ժառանգաւորաց Վարժարանի ձայնադրութեան ուսուցչին, Տիար Սահակ Գալայեանի: Ս. Գերեզմանին շրջափակը լեցուցած էր ժողովուրդի ստուար բազմութիւն և Ս. Թ. Վարժարանի բովանդակ աշակերտութիւնը: Տիրող երաշտութեան պատճառաւ, «Տէր ողորմեայ»-ի ատեն խնդրուեցաւ ներկաներէն աղօթել որ Տէրը իր բարեբար անձրեւներով ոռոգէ Ս. Երկիրը, Ս. Պատարագի

ընթացքին, ժառ. Վարժարանի սաները ստացան Ս. Հաղորդութիւն: Արարողութիւնները վաղուեցան տաճարի մեր տեսչարանին մէջ: Վերադարձին, Հայոց Թագի մուտքէն մինչև մայրավանք, Թագի յառաջացաւ երգելով «Ես ի լուսոյ» շարականը ու բարձրացաւ Պատրիարքարան, ուր Գեր. Տ. Սուրեն Եպս. Քէմանեան նախագահեց «Տեօրնէք»-ի արարողութեան: Գեր. Տ. Տ. Զարեհ, Սուրեն և Նորայր Եպիսկոպոսներ օրնեցին Ս. Աթոռոյ հացը, աղը, ձէթը և բոլոր բարիքները: Զոյրը կրկնուեցաւ նաև սեղանատան, մատանին, փունին և խոհանոցին մէջ: Օրհնուեցաւ նաև աւանդական հերթայի ճաշը:

— Մայր Տաճարին մէջ պաշտուած Յովհաննու Մկրտչի հանդիսաւոր նախատօնակին նախագահեց Գեր. Տ. Նորայր Եպս. Պողոսեան:

● Եւ. 27 Յուն. — Ծնունդ Յովն. Կարապետի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Թորանի աշակոյման Ս. Կարապետի խորանին վրայ: Ժամարարն էր Զոգ. Տ. Վարուժան Կրդ. Գապարաճեան:

● Կիր. 30 Յուն. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Եփեսոսի Տաճարի Աւագ Թորանին վրայ: Ժամարարն էր Զոգ. Տ. Հայկազուն Կրդ. Արքայանեան:

Պ Ա Շ Տ Օ Ն Ա Կ Ա Ն Բ

● Եւ. 30 Դեկտ. — Երեկոյեան, Ֆրանչիսկեաններու վանքին մէջ տրուած շարժապատկերի երեք ներկայացումներու, «Ծնունդը Բեթլեհէմի մէջ», «Զարարանաց ձիթնիները» և «Ծովի մականեան վար հովիտը» նիւթերուն շուրջ ներկայ գտնուեցան Բար. Յովսէփ Սրկ. Մամուր և Տիար Կարպոս Հինգիլեան:

● Կիր. 2 Յուն. — Կէսօրէ ետք, տեղւոյ St. Anne-ի սրահներուն մէջ, Ֆրանսական Ընդհ. Հիւպատոսի և Տիկին de Salhiere-ի մեկնման առթիւ տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Զոգ. Տ. Հայրիկ Կրդ. Ասլանեան և Տիար Կարպոս Հինգիլեան:

● Դշ. 5 Յուն. — Կէսօրէ ետք, Պէյրուսիէն Ս. Աթոռ ժամանեց յայտնի ուսումնապետ Տիար Բիւզանդ Եղիանեան և մեկնեցաւ յաջորդ օրը:

● Եր. 8 Յուն. — Օրթոտոքներու Ծննդեան տօնին առթիւ, առաւօտեան ժամը 10ին, Ամեն. Տեղապահ Ս. Հայրը, ընկերակցութեամբ Գեր. Եպիսկոպոսներու և Զոգ. Հայրերու, շնորհաւորական այցելութիւն տուաւ Յունաց Պատրիարքարանին, իսկ Զոգ. Տ. Պարգե Կրդ. Վրթանէսեան: Ընկերակցութեամբ մի քանի Զոգ. Հայրերու, այցելեց Ղպտոց Եպս. և, Ասորոց Մեծաւորին և Հապէշաց Եպս. ին:

● Ուր. 14 Յուն. — Նոր Տարւոյ առթիւ, Ս. Պատարագէն ետք Պատրիարքարան շնորհաւորական այցի եկան Յորդանանի Արտաքին Գործոց Նախարարը, Ամերիկեան Ընդհ. Հիւպատոսը և այլ ականաւոր անձնաւորութիւններ:

● Եր. 15 Յուն. — Կէսօրէ առաջ, Պետական Ծառի Տօնին առթիւ, Հարամ էլ-Շէրիֆի մէջ, Քաղաքիս Կառավարչին կողմէ տրուած հանդիսութեան ներկայ գտնուեցաւ Ամեն. Տեղապան Սրբազանը, ընկերակցութեամբ Հոգ. Տ. Հայկազուն Վրդ. Արքայանանի եւ Տիար Կ. Հինգիսանի:

— Կէսօրէ ետք, օդային զծով քաղաք ժամանեց Գեր. Տ. Ռուբէն Արքեպս. Մանասեան, որ երկու ամիսներէ ի վեր կը գտնուէր Պաղատա: Գեր. Սրբազանին զիմաւորելու զացած էր Հոգ. Տ. Զաւէն Վրդ. Զինչիսեան:

— Նոյն ատեն, օդային զծով Ս. Աթոռ ժամանեց Հոգ. Տ. Հայկասեր Վրդ. Պայրամեան, որ երեք ամիսներէ ի վեր արձակուրդով կը գտնուէր Եղիպատա:

— Երեկոյեան, ցամաքի ճամբով Ս. Աթոռ ժամանեց Բերիոյ թեմի Առաջնորդ Գեր. Տ. Զարեհ Եպս. Փայասեան: Իրեն կ'ընկերանար Անթիլիասի Նորինձայ Միաբաններէն Հոգ. Տ. Զաւէն Արդ. Արքունիան: Վերադարձան Եր. 29 Յունուարի առաւօտուն: Գեր. Տ. Զարեհ Եպս ի հետ լիբանան մեկնեցաւ Նաե Ս. Աթոռոյն Պատրիարքական Տեղապան Ամեն. Ս. Հայրը Գեր. Սրբազանը յատկապէս եկած էր Ս. Ծննդեան տօնին առթիւ:

● Ել. 20 Յուն. — Ս. Ծննդեան տօնին առթիւ, առաւօտեան ժամը 9.30էն սկսեալ, Պատրիարքարան շնորհաւորական այցի եկան յաջորդաբար Յունաց Պատր. Փոխանորդը, Յրանչիկեանց Կիւսթոսը եւ Լատինաց Պատրիարքը իրենց Միաբանութեամբ, Պապական Նուիրակը իր հետեւորդներով, Ղպտոց եւ Ասորաց Հոգ. Տեսուչները եւ Հապէշաց Եպս. Զննդերմ Միաբանութեամբ, Յոյն եւ Հայ-Կաթօլիկ Մեծաւորները, Մարոնիթ Եպս. Լուտերակեանց Մեծաւորը, Անկլիքան Եպս. Փոխանորդը, Համալսարանային Եկեղեցիներու Խորհուրդի Ներկայացուցիչը, Քաղաքիս Վսեմ. Մոսթատարֆը, Քաղաքապետը, իր Փոխանորդով եւ Քաղաքապետական Մարմնով, Ոստիկանապետը, Հին Քաղաքի Ոստիկանապետը, Անցադրային Վարչութեան Տնօրէնը, Ս. Տեղեաց Քայմաքամը, Ս. Տեղեաց Ոստիկանապետը, Միւլիթին, Ամմանի Անգլիկան Գեղանը իր հետեւորդներով, Լիբանանեան Ընդհ. Հիւսպատուր եւ այլ ակնաւոր անձնաւորութիւններ:

— Կէսօրէ ետք, Քաղաքիս Centre Culturelի կողմէ Ecole Bibliqueի սրահին մէջ Prof. Louis Massignonի (Անդամ Գահիրէի Արաբական Կառնաին) կողմէ խորհրդածութիւնք Արաբական քերականութեան մասնաշաղկապեան վրայ Նիւթին շուրջ տրուած բանախօսութեան ներկայ գտնուեցաւ Բար. Յովսէփ Սրկ. Մամուր:

● Բլ. 24 Յուն. — Կէսօրէ առաջ, Ամեն. Տեղապան Ս. Հայրը, ընկերակցութեամբ Գեր. Տ. Զարեհ Եպս. Փայասեանի եւ Տիար Կ. Հինգիսանի, այցելեց Պապական Նուիրակ Mons. Silvio Oddi:

● Գլ. 25 Յուն. — Առաւօտուն, Ամեն. Տեղապան Ս. Հայրը վանական գործերով մեկնեցաւ Խարաշէ եւ վերադարձաւ Ել. 27 Յուն. 55 կ. վ.:

Ս. ԾՆՆԴԵԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՐՈՍԱԳԷՄԻ ՄԷՋ

Ըստ սովորութեան, Երուսաղէմի մէջ Սուրբ Ծննդեան ձրագալոյցի արարողութիւնները կատարուեցան Ս. Յարութեան Տաճարին մէջ, Ս. Գերեզմանի ատենին մէջ պաշտուած ժամերգութենէն եւ ձրագալոյցի կարգէն ետք, Քրիստոսի լուսաւոր Քերեզմանին վրայ մատուցուեցաւ Ս. Պատարագ, ժամարան էր Հոգ. Տ. Վազգէն Արդ. Գրգորեան: Ապա, Գեր. Տ. Նորայր Սրբազան նախագահեց Ս. Ծննդեան նախատօնակին, որմէ ետք Սուրբ Գերեզմանին շուրջանակի դարձմամբ եւ խորհուրդ մեծի երեցեցողութեամբ թափօր ուղղութեցաւ զէպի մեր Տեղաբանը ուր կարգացուեցաւ Ծննդեան Աւետարան ու երգութեցաւ «Փառք ի բարձունք»:

Իսկ Զորեքշարթի առաւօտեան ժամը 3.30էն սկսեալ, Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ կատարուեցան զիւրարիս եւ առաւօտեան ժամերգութիւններ: Սրտան պատարագիչն էր Ընկալեալ սովորութեան համաձայն, Ս. Հրեշտակապետաց վանքի Տեսուչը՝ Հոգ. Տ. Վարուժան Վրդ. Գաղարանեան: Ապա, Գեր. Տ. Նորայր Եպս. Պաղարան նախագահեց Ջրօրհնեաց կարգին:

Ի բացակայութեան ժառանգաւոր Սանեբու, թէ երկէ եւ թէ այսօր երեցեցողութիւնները կատարուեցան տեղացի ազգայիններու կողմէ:

Ս. ԾՆՆԴԵԱՆ ՈՒՆՏԱՒՈՐՆԵՐ Ի ՍՐԱՅԷԼԷՆ

18 Յունուար Երեքշարթի առաւօտեան ժամը 7ին, Խորաշէլէն Ս. Քաղաք ժամանեց 260 ազգայիններու ուխտաւորական կարաւանը, եկած մեծ մասամբ Հայֆայէն եւ Յոյպէէն, փոքր թիւով ալ Նոր Երուսաղէմէն, Աքքիայէն, Նազարէթէն, Լիտտայէն եւ Ռեմէլէն: Սահմանադրութիւն՝ անոնք զիմաւորութեան իրենց ազգականներէն ու ժողովուրդի ստուար բազմութենէ մը: Անոնք բոլորն ալ անխտիր ներկայ եղան Սուրբ Ծննդեան արտադրաւ արարողութիւններուն, ժամանք ի Ռեմէլէմ եւ այլք յերուսաղէմ, վայելելով հոգեկան մխիթարութիւն ու անոնցմէ շատեր ստացան Ս. Հաղորդութիւն: 36 ժամերու արտօնութեամբ միայն եկած ըլլալով, Զորեքշարթի երեկոյեան անոնք վերադարձան իրենց տեղերը: Հոգեպէս կազդուրուած ու զոհ սրտով Ս. Ծննդեան տօնին առթիւ, եկած էին Նաե Հիւս. Ամերիկայէն, Սիւրիայէն, Լիբանէն եւ այլ երկիրներէ փոքրաթիւ ուխտաւորներ: